ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 դեկտեմբերի 2017 թվականի N 284-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆԱՄՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և ի կատարումն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 8-ի N 01/15.1/8002-17 հանձնարարականի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

1) ***Միհր Եղիազարյան*** - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,

2) ***Անդրանիկ Ասատրյան*** - հանձնաժողովի նախագահի տեղակալ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ,

3) ***Վահագն Դավթյան*** - հանձնաժողովի նախագահի տեղակալ, Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության Կոտայքի մարզային գործակալության պետ *(համաձայնությամբ)*,

4) ***Ռուբեն Շրոյան*** - անդամ, «Անասնարուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Կոտայքի մասնաճյուղի տնօրեն *(համաձայնությամբ)*,

5) ***Արմենուհի Հարությունյան*** - անդամ, Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության Կոտայքի մարզային գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ *(համաձայնությամբ)*,

6) ***Էմիրա Աֆյան*** - անդամ, Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության Կոտայքի մարզային գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ *(համաձայնությամբ)*,

7) ***Կարինե Ավագյան*** - անդամ, Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության Կոտայքի մարզային գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ *(համաձայնությամբ)*:

2. Առաջարկել՝

1) համայնքների ղեկավարներին՝ տեղերում ստեղծել հանձնաժողովներ և անձնական պատասխանատվությամբ ապահովել գյուղատնտեսական կենդանիների հաշվառումը և հաշվետվությունները տարածքային վիճակագրական համապատասխան գործակալությանը սահմանված ժամկետում առաքումը,

2) մարզային վիճակագրական վարչությանը՝ *(պետ Վ. Դավթյան)* համայնքներին ապահովել անասնագլխաքանակի հաշվառման համար անհրաժեշտ քանակի հաշվետվության ձևերով, տրամադրել համապատասխան մեթոդական ցուցումներ և ամփոփ տվյալները սահմանված ժամկետում ներկայացնել վերադաս կազմակերպություններին:

3. Հանձնաժողովի անդամ են համարվում նաև տվյալ համայնքի ղեկավարը *(գյուղի բնակավայրի վարչական ղեկավար) (համաձայնությամբ)*:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Հ. Հայրապետյանի* վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Գ. ԳՈՒԼՈՅԱՆ**

2017 թվականի դեկտեմբերի 12
ք. Հրազդան